



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ
ՀԱՄԱՆՈՐԾՆ



«ՀՀ շուկայում գործող ավիաընկերությունների բնապահպանական քաղաքականության համեմատական վերլուծություն» թեմայով մրցույթի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

ԱՆՎԱՆՈՒՄԸ՝

ՀՀ շուկայում գործող ավիաընկերությունների բնապահպանական քաղաքականության համեմատական վերլուծություն

ՆՊԱՏԱԿ՝

- Ավիացիոն ծառայությունների զարգացման և ընդլայնման պայմաններում շրջակա միջավայրում արդեն իսկ տեղ գտած կամ ակնկալվող ազդեցությունների համեմատական վերլուծություն,

ԹԵՄԱՏԻԿ ՈՒՂՂՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝

- Ավիացիոն տրանպորտի ազդեցության գնահատումը շրջակա միջավայրի վրա:
- Ավիացիոն ծառայությունների զարգացումը վառելիքի սահմանափակ պաշարների պայմաններում:
- Ավիացիայի ազդեցությունը կլիմայի փոփոխության վրա:
- Ավիացիոն աղմուկի ազդեցությունը:
- Էկո-օդանավակայաններ:
- Վերլուծություններ՝ ավիացիոն փոխադրումների արդյունքում ածխածնային արտանետումների, վառելիքի խնայողությունների, շրջակա միջավայրի օգուտների, ծախսերի և այլ ցուցանիշների հաշվարկի համապատասխան գործիքների կիրառմամբ (տե՛ս <https://www.icao.int/environmental-protection/Pages/Tools.aspx>):
- ՀՀ ավիացիոն շուկայի վերաբերյալ պարտադիր վերլուծություն:
- այլ:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐ՝

- Զեկույցները պետք է համապատասխանեն մրցույթի թեմային,
- Պարունակեն միմյանց չհակասող իրական և փաստարկված տվյալներ՝ տրամաբանական հաջորդականությամբ,



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ՏԱՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ
ՀԱՄԱԵՍՐՈՒՄ



- Լինեն ինքնատիպ, հիմնավորված և պարունակեն որոշակի նորույթ,
- Համապատասխանեն հետևյալ տեխնիկական պահանջներին՝
 - Առավելագույն ծավալը՝ 25-30 էջ,
 - Էջի լուսանցքները՝ վերևից՝ 2 սմ, ներքևից՝ 2,5 սմ, ձախից՝ 3 սմ և աջից՝ 1 սմ,
 - Տառատեսակը՝ GHEA Grapalat կամ GHEA Mariam,
 - Տառաչափը՝ 12, տողամիջյան հեռավորությունը՝ 1,5,
 - Այլ աղբյուրներից մեջբերումների դեպքում հղումները պարտադիր են,
 - Թույլատրվում են աղյուսակներ և գծապատկերներ, որոնցից՝ յուրաքանչյուրի ծավալը չպետք է գերազանցի 1 էջը:

→ Ձեկույցները պետք է բաղկացած լինեն հետևյալ բաժիններից.

- **Հեղինակ(ներ)ի անուն, ազգանուն** (վերևի աջ անկյունում),
- **Ձեկույցի վերնագիր** (մեկ տող ներքևից, կենտրոնական հավասարեցմամբ՝ մեծատառերով)
- **Համառոտագիր:** Ձեկույցի ամփոփ բովանդակությունը 0.5-1 էջի սահմաններում:
- **Հիմնաբառեր:** 4-6 հիմնաբառ:
- **Վերլուծություն:** Թվային ցուցանիշների կիրառումը և դրանց վրա հիմնված հաշվարկների իրականացումը խրախուսվում է:
- **Արդյունքներ:**
- **Եզրակացություն:** Պետք է պարունակի նաև հստակ ձևակերպված առաջարկություններ:

ՊԱՀԱՆՁՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ՝

1. Մասնակցության հայտ՝ լրացված ըստ կցված ձևաչափի (**հայտի ձևը հետևյալ հղումով՝ <https://asue.am/upload/files/amberd/application-form-amberd.pdf>**),
2. Տեղեկանք դեկանատից ուսման վերաբերյալ (ստորագրված և կնքված),
3. Անձնագրի պատճեն,
4. Սահմանված պահանջների համաձայն ներկայացված զեկույց:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՆԴՂԱԿ

Ձեկույցները գնահատվում են մրցութային հանձնաժողովի կողմից՝ ըստ ստորև ներկայացված գնահատման սանդղակի



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ՏԱՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ
ԿԱՄԱՍԱՐԱՆ



№	Գնահատման չափանիշ	Միավոր
1	Վերլուծության համապատասխանություն առաջադրված նպատակներին և խնդիրներին	0-5
2.	Հիմնավոր և միմյանց չհակասող փաստարկների առկայություն	0-5
3.	Օրիգինալություն, նորարարական մտքի առկայություն	0-5
4.	Հիմնավորված եզրակացություններ և կիրառական առաջարկություններ	0-5
Ընդամենը՝		20 միավոր